Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

1909թ. ԱԴԱՆԱՅԻ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արփինե Բաբլումյան

Դարեր շարունակ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել հայկական տարածքների ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ ի նպաստ թուրք և քուրդ էթնոդավանական տարրի: Դեռ XVI-XVIII դարերի ընթացքում ողջ կայսրության տարածքում հետևողականորեն իրականացվել է հայերի բռնի մահմեդականացման քաղաքականություն: Մյուս կողմից՝ կայսրության վարած ազգային, սոցիալական, կրոնական խտրական քաղաքականությունը ժամանակի ընթացքում անխուսափելիորեն հանգեցնում էր երբեմնի հայաբնակ տարածքների հայաթափմանը: XIX դարի վերջին ժողովրդագրական կտրուկ փոփոխությունների պատճառ հանդիսացան Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը, ինչպես նաև գրեթե նույն ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունից՝ արևմտահայ բնակչության ԱՄՆ սկսած արտագաղթը: XX դարասկզբին դեպի ԱՄՆ արտագաղթի տեմպերը մի փոքր նվազել էին, սակայն Ադանայի 1909 թ. ջարդերից հետո ավելի ու ավելի շատ հայեր լքեցին իրենց բնօրրանը՝ ապաստանելով այլ երկրներում: Արտագաղթի տեմպերն աճեցին ոչ միայն ջարդից տուժած նահանգներից, այլ նաև մյուս նահանգներից, ուր կիլիկյան արհավիրքի սարսափները որևէ հույս չէին թողել ապագայի հանդեպ: Ջարդն էականորեն ազդեց հայ բնակչության թվաքանակի ու հայաբնակ վայրերի հայաթափման վրա, որն իր գագաթնակետին հասավ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով:

1909 թ. ապրիլին Ադանայի նահանգում և Հալեպի նահանգի որոշ բնակավայրերում իրականացված կոտորածներից հետո Կիլիկիայի տարածքում տեղի ունեցան ժողովրդագրական որոշակի փոփոխություններ, կոտորածի հետևանքով արձանագրվեցին բնակչության տեղաշարժեր, որոնց էլ կփորձենք անդրադառնալ այս ուսումնասիրության շրջանակներում:

Կոտորածներից հետո արձանագրված ժողովրդագրական փոփոխություններին հարկ ենք համարում անդրադառնալ հենց ջարդի զոհերի մոտավոր թվաքանակի հստակեցմամբ: Այստեղ տեսակետներն ու բերված ցուցանիշները տարբեր են, քանզի խիստ հակասական են պաշտոնական թուրքական և՝ մյուս կողմից՝ հայկական և օտար աղբյուրների ներկայացրած տվյալները: Ջարդերից հետո զոհերի թիվը հաշվարկելիս շրջանառվեց 30000 թիվը: Որոշ հայկական թերթերի հաշվումներով ջարդերին զոհ էր գնացել 35000-ից ավելի մարդ, այրվել էին մի քանի տասնյակ գյուղեր:[1] Իշխանություններն այս տվյալներին արձագանքեցին խիստ բացասական կերպով: Ադանայի կուսակալ Մուստաֆա Զեհնին նշում էր, որ զոհերի թիվը 30000 հաշվելը զրպարտություն է՝ նշելով, որ զոհերի ընդհանուր թիվը 10000-ից քիչ է:[2] Կոտորածի հետևանքներն ուսումնասիրելու տեսանկյունից կարևորվում են նույն 1909 թ. կազմված տեղեկագրերը, որոնցից մեկը Օսմանյան Երեսփոխանական ժողովի կողմից Կիլիկիո աղետի քննիչ Հակոբ Պապիկյանի տեղեկագիրն է, որում, խոսելով զոհերի թվի մասին, հեղինակը նշում է. «Ըստ իմ կատարած քննութեան արդիւնքին անձերու կորուս-

1 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Ներսիսյան Մ.Գ., Սահակյան Ռ.Գ., Եր., 1991, էջ 239:

2 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 302:

տը 25 կամ 30000 կը հասնի. կառավարութիւնը պաշտօնապէս 2500 քրիստոնեայ և 1900 իսլամ կը ներկայացնէր... Ջարդուող քրիստոնեաներուն թիւը ծածկելու համար ամէն միջոցի դիմած են. զանազան վայրերու քահանաները, առաջնորդները և մուխթարները, որոնք միայն պիտի կրնային տալ ճիշդ գաղափար մը ջարդուածներուն մասին, բոլորը սպանուած են»:[3] Պապիկյանը նշում է, որ անհնար է տալ զոհերի ամբողջական թիվը, քանի որ զանազան մահմեդական ագարակներում ևս կան սպանվածներ, որոնց թիվը հնարավոր չէ հստակեցնել: Նա իր տեղեկագրում գրում է. «Ջարդերը տեղի ունեցած են աշխատանքի և առուտուրի ամենէն եռուզեռ շրջանին, Անատոլուի զանազան նահանգներէն՝ և նոյն իսկ Մուսուլի նման այնքան հեռաւոր նահանգէ մը հասած գործաւորներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ: Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր Հայերէ՝ որոնց մեծագոյն մասը ջարդուած է»:[4]

Հայոց պատրիարքարանի Ազգային վարչության քննիչ մասնախմբի կազմած տեղե- կագրի համաձայն՝ Կիլիկիայի աղետին զոհ էր գնացել 18839 հայ, 1250 հույն, 1272 ասորի, ընդհանուր առմամբ՝ Ադանայի նահանգում՝ 21361, Հալեպի նահանգում՝ 1151 մարդ, ընդամենը՝ 22512 հոգի, ընդ որում՝ տեղեկագրում հստակեցվում է, որ «ասոնց մէջ չեն գըտնուիր պանդուխտները, որոնց թիւը միշտ անորոշ մնացած է»:[5] Այս տեղեկագրի տվյալներով՝ միայն Ադանա քաղաքում և հարակից ագարակներում սպանվել էր 9780 մարդ,[6] այն դեպքում, երբ «Ազատամարտում» հրատարակված վիճակագրության համաձայն միայն Ադանա քաղաքում և հարակից բնակավայրերում սպանվել էր 18627 հայ:[7] 10293 մարդ, համաձայն այս վիճակագրության, սպանվել էր շրջակա թուրքական գյուղերում, 2762-ը՝ Ադանայի խաներում.[8] պարզ է, որ խոսքն այս երկու դեպքում էլ այլ բնակավայրերից արտագնա աշխատանքի մեկնածների մասին է, ովքեր Կիլիկիա էին ժամանել Հաճնից, Կեսարիայից, Սեբաստիայից, Խարբերդից, Մալաթիայից: Պատրիարքարանի հանձնաժողովի կազմած տեղեկագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անկատար է ոչ միայն այն առումով՝ որ չի տալիս կոտորածներին զոհ գնացած պանդուխտների թիվը, այլև այստեղ շրջանցված են Կիլիկիայի մի շարք բնակավայրեր, որոնք ևս ենթարկվել են ջարդերի ու մարդկային կորուստներ ունեցել: Մասնավորապես, տեղեկագրում չեն հիշատակվում Տարսոնում և նրա շրջակայքում սպանվածները: Ամերիկացի լրագրող և դեպքերի ականատես Հ. Ադամ Գիբբոնսը նշում է, որ 100 հոգի սպանվել է Տարսոնում, 400-ը՝ մոտակա գյուղերում:[9] Կոտորածների հետևանքներին ականատես Չարլզ Վուդսի վկայությամբ՝ Տարսոնում հիմնահատակ ավերվել էր 800 տուն,[10] ավերվել էին բազմաթիվ խանութներ, թալանվել էր հայերի ողջ ունեցվածքը:[11] Գրեթե նույն տվյալն է տալիս Հ. Թերզյանը, որի հավաստմամբ Տարսոն քաղաքում սպանվել էր 70, շրջակա բնակավայրերի սպանվածների հետ՝ 560 հայ, որից 160-ը՝ Գոզոլուգ գյուղում,[12] ուր նաև թալանվել ու հրկիզվել էին հայերի շուրջ 75 տներից 68-ը:[13]

3 Նույն տեղում, էջ 447:
4 Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Կ. Պոլիս, 1919, էջ 18:
5 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 281:
6 Նույն տեղում, էջ 278:
7 Նույն տեղում, էջ 157:
8 Նույն տեղում, էջ 157:
9 Gibbons Helen, The Red Rugs of Tarsus: A Women's Story of the Armenian Massacres, Paris, 1919, p. 112.
10 Woods Ch., The Danger Zone of Europe. Changes and problems in the Near East, Boston, 1911, p. 148.
11 Վուդսի վկայությամբ՝ Տարսոն քաղաքում սպանվել էր 100, շրջակա գյուղերում՝ 500 քրիստոնյա:
12 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 166:
13 Woods Ch., նշվ.աշխ., էջ 150:

Այնուամենայնիվ, չնայած ամբողջական տվյալների բացակայությանը, կարելի է ասել, որ կիլիկյան կոտորածների ընթացքում սպանվել էր ավելի քան 30000 հայ, որից 18627-ը՝ միայն Ադանայում և շրջակա բնակավայրերում, 10000-ից ավելի էլ՝ այլ բնակավայրերում: Թերևս սա հայ պատմագիտության մեջ հաստատված՝ ջարդին զոհ գնացած հայերի առավել իրական թիվն է: Այսպիսով, Կիլիկիայի կոտորածների անմիջական հետևանքը 30000-ից ավելի հայերի սպանությունն էր: Եթե տարբեր նահանգներից եկածների սպանությունը էականորեն չէր ազդում այդ բնակավայրերի ժողովրդագրական պատկերի վրա, ապա Ադանայի նահանգի համար զոհերի թիվը մեծ հարված էր հայ բնակչության թվաքանակին:

Խոսելով առանձին բնակավայրերի տված մարդկային կորուստների թվի մասին՝ նշենք, որ ջարդից տուժեցին Ադանայի նահանգի գրեթե բոլոր բնակավայրերը: Ջարդերից հետո արձանագրված ժողովրդագրական փոփոխություններն առավել տեսանելի էին ջարդերի թատերաբեմ Ադանայի ու Մերսինի գավառներում: Հ. Աշճյանի բերած տվյալների համաձայն՝ Ադանա քաղաքի բնակչությունը հաշվվում էր 66000, որից 22000-ը հայ էին, այդ թվում՝ 20000 լուսավորչական, 1500 բողոքական, 500 կաթոլիկ:[14] Հ. Թերզյանը հայերի քանակը Ադանա քաղաքում հաշվում է 30000:[15] Ռ. Գևորգյանի հրատարակած 1913-1914 թթ. պատրիարքարանի ներկայացրած տվյալների համաձայն Ադանայի ողջ գավառակում հաշվվում էր 27990 հայ:[16] Հետաքրքիրն այն է, որ գավառակում ներկայացված վեց գյուղերի հայության թիվը գրեթե նույնն է, ինչ 1908 թ. տվյալները, իսկ քաղաքում բնակվող հայերի համար բերված է նոր թիվ. 1908 թ. պաշտոնական մարդահամարի տվյալների համաձայն՝ քաղաքում արձանագրված էր 17844 հայ,[17] 1913 թ. մարդահամարի տվյալներով՝ 26430 հայ:[18] Նահանգի մյուս բնակավայրերի հայության թվաքանակի վերաբերյալ ևս բացակայում են նոր՝ 1913-1914 թթ. վերաբերող տվյալները և 1908 թ. տվյալները հիմնականում ներկայացվում են որպես նախապատերազմյան շրջանի տվյալներ: Տվյալների բացակայությունը դժվարացնում է կոտորածի հետևանքների ուսումնասիրությունը: Պատրիարքարանը, թերևս, նույնպես չի տիրապետել նոր տվյալների, այդ իսկ պատճառով ներկայացվել են հին տվյալները: Ինչ վերաբերում է Ադանա քաղաքի հայության թվաքանակին, ապա այս դեպքում, թերևս, ներկայացված թիվը մոտ է ճշմարտությանը, քանի որ չնայած բազմահազար զոհերին, քաղաքը կոտորածից հետո ևս մնաց որպես հայաշատ կենտրոն, մանավանդ որ ջարդերից հետո այստեղ հաստատվեցին նաև նահանգի փոքրաթիվ հայություն ունեցող որոշ բնակավայրերի հայեր: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ կոտորածների հետևանքով քաղաքում հայության թվաքանակը ոչ թե նվազեց, այլ 1908 թ. տվյալների համեմատ նույնիսկ աճեց:

Ադանայի նահանգի բազմաթիվ բնակավայրերում կոտորածների հետևանքներն այնքան սարսափելի էին, որ դրանց արդյունքում փրկվել էին հիմնականում կանայք, երեխաներ ու հատուկենտ տղամարդիկ: Ամերիկացի միսիոներուհի Ռոուզ Լամբերտի վկայությամբ, ջարդի հետևանքներն «ավելի դյուրին է պատկերացնել, երբ հասկանում ես, որ նրանք ապրում են մի երկրում, որտեղ կանայք միշտ պաշտպանության կարիք ունեն»: Միսիոներուհին, խոսելով ջարդի հետևանքների մասին, նշում է, որ, օրինակ, մի ընտա-

14 Աշճեան Հ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 15:
15 Թէրզեան Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 7:
16 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat Français, Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999, p. 25.
17 Թէրզեան Յ., Ատանայի կեանքը, էջ 47:
18 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat français, p. 25.

նիքում սպանվել են 23 հարազատները: Մեկ այլ ընտանիքից, որն ուներ 32 երեխա ու թոռ, ողջ էին մնացել հիվանդ պապը, ծեր տատը, մի որդի ու մեկ թոռ:[19] Նշենք մի քանի թվական տվյալներ, որոնք պարզ պատկերացում կտան ջարդի ողջ սարսափների մասին: Ադանայի գավառակի Ապտոզլու գյուղն ուներ 130 տուն բնակիչ, որից 100 տունը՝ հայ: Ջարդի ժամանակ գյուղում էին նաև շուրջ 400 պանդուխտ հայ մշակներ:[20] Գյուղում սպանվեց 600 մարդ. ջարդից հետո գյուղի տղամարդ հայ բնակիչներից փրկվել էր միայն մի տղա, որն էլ ջարդից հետո մահացավ բնական մահով:[21] Նույն գավառակի Միսիս գյուղի 150 տուն քրիստոնյաներից փրկվեցին միայն շուրջ 100 այրիներ ու աղջիկներ:[22] «Քիւրտ-Պաղչէ, Արփալը, Կէմի-Սիւրէն, Ապիտին-փաշա ըսուած գիւղերը այրերէն զատ ոչ տղայ ձգած են ողջ և ոչ կին»,- հավաստում է Հ. Թերզյանը:[23]

Օսմանիեն ջարդից առաջ ուներ 1000 տուն բնակիչ, որից 200 տունը մեծամասամբ հաճնցի բարեկեցիկ հայեր էին: Այստեղ անձի կորուստը կազմում էր 1500 հոգի:[24] Մեծ թվով զոհեր տվեց հատկապես Համիդիեն: Չ. Վուդսի հավաստմամբ Համիդիեի 2000 զոհերից 500-ը սպանվեցին քաղաքում, 1500-ը՝ դաշտերում.[25] այս զոհերից շատերն, ամենայն հավանականությամբ, արտագնա աշխատանքի եկածներ էին: Ըստ Հ. Թերզյանի բերված տվյալների, Համիդիեի (Կոզանի գավառ) 1003 հայերից փրկվել էր միայն 90 կին, որոնցից երիտասարդները կրոնափոխ էին արվել:[26] Զոհերի թիվն այստեղ կազմում էր հայ բնակչության շուրջ 91%-ը: Ինչ վերաբերում է Հաճըն քաղաքին, ապա այստեղ հայությունը ինքնապաշտպանության շնորհիվ թեև զերծ մնաց կոտորածից, բայց, ինչպես հավաստում է Հայոց պատրիարքարանի Կենտրոնական այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանը, «ամէնէն մեծ անձի կորուստ ունեցող տեղն է Հաճըն: Դուրսը գտնուելով ջարդողներուն թիւը (որոնց մէջ կան նաեւ կիներ ու տղաքներ) կը հասնի հազարներու»:[27] Պապիկյանի նշած տվյալների համաձայն՝ Հաճընում տեղեկություն չկար 3000 հայերի մասին, որոնք գտնվում էին Ադանայի նահանգում:[28]

Հասան Պեյլին (Զեբել Բերեքեթի գավառ) 1908 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն ուներ 1848 հայ բնակիչ:[29] Այստեղ մարդկային կորուստը կազմեց 285 հոգի: Տոկոսային հարաբերությամբ սպանվել էր հայ բնակչության շուրջ 15,4%-ը: Թեև ակնհայտ էր, որ պաշտոնական մարդահամարի ներկայացրած թիվը չէր արտահայտում հայ բնակչության իրական թվաքանակը, այնուամենայնիվ, սպանվածների քանակը էական ազդեցություն կարող էր ունենալ նաև հայերի ավելի մեծաքանակության դեպքում: Ս. Պարթևյանի բերած տվյալների համաձայն՝ 2000 հայ էր սպանվել Քեսապում:[30] Մարաշի գյուղերից Սարըլարում 15 տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ սպանվել էին, Կյոքճեյիզ գյուղում նույնպես մանուկներից ու կանանցից զատ մյուսները սպանվել էին:[31]

19 Lambert R., Hadjin, and the Armenian Massacres, p. 87.
20 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 176
21 Նույն տեղում, էջ 182:
22 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 182:
23 Նույն տեղում, էջ 253:
24 Նույն տեղում, էջ 195, 202:
25 Woods Ch., նշվ.աշխ., էջ 156:
26 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 194:
27 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ.11-1912 սեպտ. 11, Յաւելուած Տեղեկագիր պատուիրակ Պ. Ժագ Սայապալեանի, Ղալաթիա, 1912, էջ 50:
28 Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, էջ 19:
29 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 202:
30 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհավիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 43:
31 Գալուստեան Գր., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, էջ 759:

Ադանայում ինչպես Հայոց ցեղասպանության տարիներին և ավելի վաղ՝ համիդյան կոտորածների ընթացքում բազմաթիվ էին նաև բռնի մահմեդականացման դեպքերը: 1909 թ. մայիսին Ս. Պարթևյանը գրում է, որ առաջնորդարանից եկած գրությունների համաձայն, իսլամացած կանայք ու աղջիկները հետ են բերվում առևանգիչների մոտից ու հանձնվում եկեղեցուն, թեև շատերը, ում փնտրող, ճակատագրով հետաքրքրվող չկար, դեռևս մնում էին իրենց առևանգիչների մոտ՝ հատկապես գյուղերում:[32] Այս մասին վկայություն կա նաև ժամանակակից մամուլում, մասնավորապես, մի հաղորդագրության մեջ հիշատակվում են չորս կանայք, որոնք գտնվել են թուրք Սկյուտար Թոփանելի օղլուի տնից և բերվել պատրիարքարան ու հետո հանձնվել Բերայի Տիկնանց միության խնամատարությանը:[33] Ականատեսների վկայությամբ՝ Հասան Պեյլիում ևս բազմաթիվ երեխաներ ու կանայք էին առևանգվել և ամիսներով պահվել թուրքական գյուղերում, ուր նրանցից շատերը բռնի թրքացվել են:[34] Նույնն արձանագրվել է նաև Լաբաճլը, Խառնի, Տերտյուլ, Գոյագ, Կյոք Չայիր հայաբնակ գյուղերում, որտեղ աղջիկները, դեռատի կանայք առևանգվել էին խուժանի կողմից. ազատվել են շատ քչերը, որոնք փախչելով ապաստանել են Ֆնտրճագում:[35] Այս առնչությամբ Չ. Վուդսը հիշատակում է Միսիսի հայուհիներին, որոնցից ոմանք իրենց նետեցին գետն ու ինքնասպան եղան՝ թուրքական հարեմներ չընկնելու համար:[36] Դժվար է ասել, թե բռնի մահմեդականացված այս կանանցից քանիսը հետագայում մնացին մահմեդականների մոտ, բայց որ այդպիսիք կային, դա կասկածից վեր է, թեև հիմնական մասը, այնուամենայնիվ, վերադարձավ հայի ինքնությանն ու քրիստոնեական հավատքին:

Ամայացած բնակավայրերում ջարդից փրկված բնակչությունը հայտնվեց անօգնական վիճակում: Ս. Պարթևյանը գրում է, որ 40000 հայեր մնացել էին մերկ ու անոթի, այդ թվում՝ 15000-ը Ադանայում, ավելի քան 3000-ը՝ Տարսոնում, 1500՝ Մերսինում, 10000՝ Քեսապում ու նրա շրջակայքում, գրեթե նույնքան՝ Ալեքսանդրետում ու Դյորթ-Յոլում:[37] Այս մասին տեղեկացնում է նաև Կ.Պոլսի ռուսական դեսպան Գ. Զինովևը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Չարիկովին հասցեագրված իր 1909թ. մայիսի 2-ի ճեպագրում՝ վկայակոչելով Մերսինում ռուսական փոխհյուպատոս Մավրոմատիի տրամադրած տեղեկությունները: Վերջինիս հավաստմամբ՝ «իրենց ողջ ունեցվածքը կորցրած քրիստոնյաները միանգամայն զրկված են ապաստանից, և որ մահացությունը նրանց մեջ խիստ նշանակալից չափի է հասնում»:[38] Այսպիսով, զոհերի թիվը չսահմանափակվեց կոտորածի ժամանակ սպանվածներով, հետագա ամիսներին մահացության մեծ աճ նկատվեց բնակչության, հատկապես՝ երեխաների շրջանում: Ադանայում համաճարակային հիվանդություն սկսվեց, որին օրական զոհ էին գնում հարյուրավոր մանուկներ: Միայն 1909 թ. ամռան ընթացքում Ադանայում 2000 երեխա մահացավ դիզենտերիայից:[39] Քիչ չէր նաև հիվանդություններից, սովից մահացած մեծահասակների թիվը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ Կիլիկիայի կոտորածների մարդկային կորուստն ավելին էր, քան վկայակոչված 30000-ը:

32 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհավիրքը,էջ 71:
33 «Ժամանակ», Ա տարի, թիւ 305, էջ 3:
34 Գուտուլեան Գ., Հայ լեռ. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, էջ 52:
35 Նույն տեղում, էջ 53-56:
36 Woods Ch., The Danger Zone of Europe. Changes and problems in the Near East, p. 155.
37 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհավիրքը, էջ 46-47:
38 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 232:
39 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat français, p. 101.

Մյուս կարևոր և բացասական հետևանքը, որ կոտորածներն ունեցան նահանգի հայ բնակչության ժողովրդագրության վրա, մի շարք բնակավայրերի հայաթափումն էր: Խոսքը հատկապես մինչև ջարդը փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերի մասին է, որոնց բնակիչների մի մասը կոտորվեց, իսկ մյուսները ապաստանեցին այլ՝ ավելի խոշոր բնակավայրերում՝ այլևս չվերադառնալով ծննդավայր: Հայաթափման առումով առավել զգալի էին կորուստները մինչև կոտորածը սակավաթիվ հայություն ունեցող բնակավայրերում. օրինակ՝ 14 տուն հայ բնակիչ ունեցող Քյոք Չայիրում կար 15 զոհ:[40] Ողջ մնացածներն ապաստանեցին Ֆընտրճագում:[41] 20 տուն հայ ունեցող Գոյաք գյուղը տվեց 15 զոհ, 30 տուն հայ ունեցող Քիշնեզը՝ 35 զոհ:[42] Իսլահիեի շրջանի գյուղերից 40 տուն հայ ունեցող Քելլերը տվեց 15 զոհ, 30 տուն հայ ունեցող Էյնթիլին՝ 38 զոհ:[43] Քինեսլեր գյուղի 16 այրերից ջարդից փրկվեցին 2-ը, որոնցից մեկը Այնթափում էր, մյուսն էլ մահացած էր համարվել:[44]

Արտագաղթի հետևանքով փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերը վերջնականապես հայաթափվեցին: Ջարդից հետո կիլիկիահայության համար մեծ կարևորություն ունեցող խնդիրներից մեկը, եթե ոչ առաջինը, այլ բնակավայրերում ապաստանած բնակչության վերադարձն էր: Սա նախ՝ հոգեբանական մեծ խնդիր էր, քանի որ փրկվածներից շատերը չէին պատկերացնում, թե ինչպես կարելի է վերադառնալ այնտեղ, ուր ոչ վաղ անցյալում իրենց աչքի առաջ սպանել էին իրենց հարազատներին: Մյուս կողմից՝ վերադառնալով իրենց բնակավայրեր, նրանցից շատերը մնալու էին անօթևան, առանց գոյության որևէ միջոցի: Այդ պատճառով էլ մինչև տարեվերջ բազմաթիվ բնակավայրեր այդպես էլ մնացել էին ավերակ, առանց նախկին բնակիչների, որոնցից մի մասը վերջնական բնակություն էր հաստատել Ադանայում կամ հայաշատ այլ կենտրոններում, մյուսներն էլ արտագաղթել էին երկրից:

Ջարդի օրերից սկսեց և հետագայում ուժեղացավ արտագաղթը Ադանայի նահանգի տարբեր բնակավայրերից: Հարկ է նշել, որ մինչև կոտորածը, արտագաղթն Ադանայի նահանգից մեծ չափերի չէր հասնում ու անհամեմատելի էր Արևմտյան Հայաստանից հատկապես այդ ժամանակահատվածում արձանագրված արտագաղթի տեմպերի հետ: Սա, թերևս, կապված էր նահանգում և հատկապես Ադանա քաղաքում ու հարակից բնակավայրերում նկատվող տեսանելի տնտեսական աճի հետ: Արտագաղթն ուժեղացավ արդեն ջարդի օրերին: «Չինաղաղարէն ետքը մեր մէջէն շատեր՝ գլխաւորապես ունեւորները, սկսան խումբ խումբ փախչիլ շոգեկառքով դէպ ի Մէրսին և անկէ Եգիպտոս կամ Կիպրոս: Կառավարութիւնը կարծես՝ նկատելով որ երկրորդ ջարդին ենթարկուելիք մարդ չպիտի մնար, խստիւ արգիլեց այդ գաղթը և նոյն իսկ շոգեկառքի առ օրեայ երթեւեկութիւնն ալ դադրեցաւ պաշտօնապէս»,- այս առթիվ գրում է Հ. Թերզյանը:[45] 1909 թ. մայիսի դրությամբ՝ Կիպրոսում էին ապաստանել 2000 հոգի, նրանց մեջ՝ Ադանայի ու Տարսոնի մեծահարուստ մարդկանց ընտանիքները՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ:[46] Կ. Պոլսի պատրիարքությանը 1909 թ. ապրիլի 15-ին Քեսապից գրված նամակում նշվում է, որ շոգենավը 2500 փախստականների տեղափոխել է Բեյրութ:[47] Կիլիկյան արհավիրքից փրկված շուրջ 500 հայ փախստականներ էլ ապաստանել էին Ալեքսանդրիայի հայկական եկեղեցու բակում:[48] 700 տուն հայ բնակիչ ունեցող Քեսապից մի ֆրանսիական շոգենավ, շուրջ 6000 հայի հավաքելով լեռներից, Քեսապից տեղափոխեց Լաթաքիա:[49] Ստացվում է, որ միայն թվարկած տվյալների համաձայն՝ 10000-ից ավելի հայեր 1909 թ. ապրիլ-մայիս ամիսներին ապաստան գտան Կիպրոսում, Բեյրութում, Եգիպտոսում:

Գրեթե բոլոր ժամանակակիցներն ու ականատեսները հիշատակում են այն չքավոր ու անօգնական վիճակի մասին, որում կոտորածից հետո հայտնվել էր ողջ կիլիկիահայությունը: Ուստի ջարդից հետո արտագաղթը դարձավ արդեն ոչ միայն զուտ գոյատևման, անվտանգ կենսակերպի, այլ նաև կենսապահովման միջոց: «Հայերի տնտեսական վիճակը, որ դէպքէն առաջ շատ աղեկ ու իրենց իսլամ դրացիներուն հետ բաղդատմամբ նախանձելի մակարդակի վրայ կը գտնուէր, հիմա ինկած է: Ատոր վերականգնումին արգելք հանդիսացող գլխաւոր բանը՝ անապահովութիւնն է: Դէպքէն ի վեր ամիսներուն մէջ գերազանցապէս շեշտուած է նորէն կեանքի և ինչքի անապահովութիւնը»- նշվում է Այրիախնամի տեղեկագրում:[50] Առավել անօգնական վիճակում էր հայտնվել միջին խավը, որը ոչ միայն զրկված էր տնից, արհեստանոցից, խանութից, անասուններից, այլ նույնիսկ արհեստը վերականգնելու դեպքում չուներ գնորդ, քանի որ հայերի ունևոր խավը կամ սպանված էր, կամ ունեզուրկ էր դարձել: Անօթևան մնացած հայ արհեստավորները դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանելու համար շարունակում էին աշխատել հենց փողոցում՝ իրենց նախկին արհեստանոցների ավերակների մոտ: Նրանցից ոմանք, ովքեր որոշակի խնայողություններ էին անում, այդ գումարն օգտագործում էին արտագաղթելու նպատակով: Նման դեպքերը, Չ. Վուդսի հավաստմամբ, շատ չէին:[51] Արտագաղթի խնդրին պարբերաբար անդրադառնում էր նաև ժամանակի պոլսահայ մամուլը: Իր նամակներից մեկում Հ. Աշճյանը ներկայացնում է այն մթնոլորտը, որում հայտնվել էր Ադանայի հայությունը կոտորածներից հետո: Անձամբ դեմ լինելով արտագաղթին՝ Աշճյանը գրում է, որ «ներկայ պայմանները նկատի ունենալով՝ այս գաղափարը ունեցողներուն թոյլատու գտնուելու ենք»:[52] Ամերիկահայ գաղութի ձևավորման պատմությանը նվիրված մի հոդվածում հեղինակ Արիս Իսրայելյանը նշում է, որ Ադանայի ջարդից հետո ադանացիներն էլ սկսեցին մեծ խմբերով գաղթել:[53] 1908-1910 թթ. պատրաստած մի վիճակագրության համաձայն՝ Ֆրեզնոյում հաստատված շուրջ 2326 հայերի մեջ 8 ընտանիք (52 անձ)՝ ԱՄՆ էր եկել Ադանայից, 3 ընտանիք (14 անձ)՝ Անտիոքից ու հարակից գյուղերից, 1 ընտանիք (8 անձ)՝ Այնթափից:[54] Թերևս արտագաղթի աճող տեմպերն էին, որ քննարկումների տեղիք տվեցին տեղում՝ Մերսինում կամ Ադանայում, այլ ոչ օրինակ՝ Պոլսում, Իզմիրում կամ Եգիպտոսում որբանոց բացելու համար:

Մի կողմից արձանագրված զոհերի, կոտորածից հետո համաճարակային հիվանդություններից մահացածների թվաքանակի, մյուս կողմից՝ նահանգի բնակավայրերում տիրող չքավորության և ամենակարևորը՝ անապահովության, վախի մթնոլորտի պատճառով ավելացած արտագաղթի հետևանքով նահանգի բազմաթիվ բնակավայրերում արձա-

40 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ.11-1912 սեպտ. 11.էջ 70-71:
41 Գուտուլեան Գ., Հայ լեռ. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, էջ 56:
42 Նույն տեղում, էջ 70-71:
43 Նույն տեղում, էջ 72-73:
44 Գուտուլեան Գ., Հայ լեռ. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, էջ 74:
45 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 59:
46 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհավիրքը, էջ 51:
47 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 312:

48 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհավիրքը, էջ 189:
49 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 256-257:
50 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ.11-1912 սեպտ. էջ 5:
51 Woods Ch., նշվ. աշխ., էջ 142:
52 Աշճեան Հ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր,, էջ 90:
53 Իսրայելյան Ա, «Ամերիկահայ գաղթականութիւնը, «Ոստան», Ա տարի, թիւ 2, 1 ապրիլ 1911, էջ 399:
54 Ամերիկահայ Տարեցոյցը, կազմող՝ Մուշեղ եպիսկոպոս, Ա տարի, 1912, Պոստոն, էջ 62:

նագրվեցին շեշտակի ժողովրդագրական փոփոխություններ՝ ի վնաս հայ բնակչության թվաքանակի: Այսպես, համաձայն Հայոց պատրիարքարանի Կենտրոնական այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի կողմից կազմված տեղեկագրի, 1909 թ-ից առաջ Քըրք Խանը ուներ 80 տուն հայ և 30 տուն իսլամ բնակչություն, ջարդի հետևանքով մնացել էր 30 տուն հայ, 80 տուն իսլամ:[55] Ջարդից հետո հայաթափվեց Չոքաք գյուղը, որի հայությունը հաստատվեց Սսում:[56] Նաճարլը գյուղը ջարդից առաջ զուտ հայաբնակ էր, այն 1908 թ. մարդահամարի համաձայն ուներ 437 հայ բնակիչ:[57] 1909 թ. ապրիլին ամբողջ գյուղը հրկիզվեց: Դյորթ-Յոլում ապաստանած գյուղացիներից ջարդից հետո Նաճարլը վերադարձավ 10-12 ընտանիք: Մյուսները դեպքից հետո գյուղ էին գալիս միայն հողերը մշակելու համար, վերադառնում Դյորթ-Յոլ:[58] Ջարդից առաջ 150 տուն հայ բնակչություն ունեցող Օսմանիեում ջարդից հետո հայերի թվաքանակը նվազել էր 30 տան և միայն այլ բնակավայրերից եկած հայերի հաշվին դարձել 100 տուն:[59] Ֆասըլը գյուղը ջարդից առաջ ուներ 20, հետո՝ 10 տուն հայ: Մյուսները գաղթել էին Դյորթ-Յոլ:[60] Դեպքից առաջ Գոզոլուգ գյուղն ուներ 80 տուն, ջարդից հետո՝ 50 տուն հայ: Ջարդից փրկվել էր ընդամենը 20 տղամարդ:[61] Ադանայի Ապտոզլու գյուղը ջարդից առաջ ուներ 100 տուն հայ, իսկ կոտորածից հետո մնացել էր միայն 30-ը:[62] Ինճիրլիկը ջարդից առաջ ուներ 80, հետո՝ 30 տուն հայ: Մյուսները գյուղ էին գալիս միայն հողերը մշակելու համար, հետո վերադառնում Ադանա:[63] Միսիսի 80 տուն հայերից մնացել էր հազիվ 10 տուն, մյուսները հեռացել էին Ադանա, Դյորթ-Յոլ և այլ բնակավայրեր:[64] Ցավոք, չտիրապետելով ամբողջական տվյալների, չենք կարող տալ հայ բնակչության ընդհանուր թվաքանակի վրա կոտորածի ունեցած հետևանքների առավել ամբողջական պատկերը: Այնուամենայնիվ, ներկայացված օրինակներից երևում է, որ վերոնշյալ բնակավայրերում հայ բնակչության թվաքանակն ավելի քան կիսով չափ նվազել էր:

Այսպիսով, 1909 թ. կիլիկյան կոտորածները զգալի ազդեցություն ունեցան Ադանայի նահանգի հայության թվաքանակի վրա: Կոտորածներին զոհ գնացին հազարավոր հայեր, ջարդերից հետո շատերը մահացան հիվանդություններից, իսկ հայության մի ստվար զանգված էլ արտագաղթեց այլ երկրներ: Կոտորածներից հետո նահանգի բազմաթիվ բնակավայրերում նվազեց հայ ազգաբնակչության թիվը, հայաթափվեցին մինչև կոտորածները փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերը:

Կիլիկիայի կոտորածների մասին լուրերը տարածվեցին կայսրության ողջ տարածքում՝ շատերի մեջ առաջ բերելով վախի և ապագայի հանդեպ անվստահության զգացումը՝ ուժգնացնելով դեռևս համիդյան ջարդերից ի վեր գոյություն ունեցող այս հոգեվիճակը: Այս մթնոլորտն էլ իր հերթին արտագաղթի մի նոր ալիք առաջացրեց, որի հետևանքով մինչև 1915 թ. կայսրության ողջ տարածքում նորանոր բնակավայրեր հայաթափ եղան:

55 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ.11-1912 սեպտ. 11, էջ 5:
56 Նույն տեղում, էջ 54:
57 Թէրզեան Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 47:
58 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 59:
59 Նույն տեղում, էջ 61:
60 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 75:
61 Նույն տեղում, էջ 77:
62 Նույն տեղում, էջ 78:
63 Նույն տեղում, էջ 79:
64 Նույն տեղում, էջ 79:

Arpine Babluмyan

Demographic Changes After 1909 Massacres in Adana and Aleppo Vilayets

Summary

The article reveals the main features of population changes after Cilician massacres of 1909. After these massacres the number of Armenian population in the provinces of Adana and Aleppo decreased drastically. The Adana massacres resulted in:

1. mass killings,
2. deaths from starvation and illness
3. cases of forced conversion to Islam,
4. absolute loss of the Armenian population in some settlements with former large number of Armenians
5. immigration.